ՀՏԴ 30.607.8

Ա.Ջ. ԱՍԱՏՐՅԱՆ, Ա.Ս. ՓՆՋՈՅԱՆ

ՏԵՔՍՏԻԼ ԵՎ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ՊԻՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄԸ

(Գյումրի)

Կատարվել է տեքստիլ և թեթև արդյունաբերության իրերի ապրանքանիշերի և պիտակների նմուշների վերլուծություն, որի հիման վրա առաջարկվել է դրանց դասակարգման նոր համակարգ՝ ըստ տեխնոլոգիական, կառուցվածքային, գեղարվեստա-կերպարային հատկանիշների:

Առանցքային բառեր. պիտակ, ապրանքանիշ, գովազդ, պիտակների դասակարգման համակարգ:

Ներածություն: Պիտակավորումը պայմանական գրություն է, որն ուղեկցում է ապրանքների փաթեթավորմանը կամ անմիջականորեն ապրանքին, բովանդակում տեղեկություն ապրանքի մասին:

Արտադրանքի կամ իրի պիտակավորումն ունի հին պատմություն. մ.թ.ա. 4000-3100 տարի առաջ դեռ Միջագետքում ապրանքի կամ նյութական բարիքների նշման-համարակալման համար օգտագործում էին առաջնային պատկերագրություններ: Սկսելով պարզագույն դրոշմներից և շտամպերից՝ պիտակները և ապրանքանիշերը կատարում էին գովազդային և բացատրական գործառույթներ, որոնք բնորոշ էին, ոչ վաղ անցյալում, միայն պաստառներին և գրքույկներին: Ի տարբերություն դիզայնի այլ տեսականու՝ ապրանքանիշ-պիտակ կրող իրերը ստիպում են իրենց դիտել, կարդալ, որի հետևանքով մեծանում է նրանց գովազդա-տեղեկատվական գործառույթը:

Ապրանքանիշ-պիտակային իրի կարևորությունը և պահանջը ստիպում է կատարել նախագծման մեթոդների ու տեխնոլոգիայի պատմության վերլուծություն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապրանքանիշերը և պիտակները հայրենական դիզայնում օգտագործվում են սահմանափակ հնարավորություններով, և այս ճյուղը Հայաստանում բավականին թույլ է զարգացած: Այսպիսով, ապրանքանիշ-պիտակային իրերի դիզայնի ուսումնասիրությունը, ամբողջ տեսականու համակարգված դասակարգումը, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը տվյալ ասպարեզում համարվում են ***արդիական***, քանի որ պիտակային դիզայնը հնարավոր չէ ուսումնասիրել առանց տեքստիլ և թեթև արդյունաբերության իրի արտադրողի, պիտակների և ապրանքանիշերի նախագծվող ֆիրմային ոճի հետազոտման:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Աշխատանքի նպատակն է կատարել տեքստիլ և թեթև արդյունաբերության ապրանքապիտակային տեսականու համակարգված դասակարգում:

Առաջարկվել է պիտակային արտադրանքի համակարգված դասակարգում՝ ըստ տեխնոլոգիական, կառուցվածքային, գեղարվեստա-կերպարային հատկանիշների:

Հետազոտության արդյունքները: Դասակարգումն ըստ **տեխնոլոգիական** հատկանիշների կատարվել է մի քանի պարամետրերով՝ ըստ նյութի, պատրաստման-տպման միջոցի, ուտիլիտար գործառույթների, պաշտպանական ձևի (ակցիզային պիտակ-դրոշմանիշեր):

Թեթև արդյունաբերության և տեքստիլ իրերի կախովի պիտակները հիմնականում պատրաստում են կոշտ թղթից, ստվարաթղթից կամ կոմբինացված նյութերից [1]: Թղթե և ստվարաթղթե պիտակների և ապրանքանիշերի արտադրության համար օգտագործում են տպման օֆսեթային կամ ֆլեքսագրաֆիկան մեթոդը: Կարելի է օգտագործել նաև թվային տպման, ձեռքի և ավտոմատ մամլման մեթոդները: Ներկայումս առավել հաճախ օգտագործվում է հատուկ թերմոտրանսվեր սարքավորումների վրա ստվարաթղթե և թղթե պիտակներում ելքային ինֆորմացիայի հետտպման մեթոդը, որով տրվում է իրի արտիկուլի մասին ինֆորմացիան՝ չափսը, նյութը, բաղադրությունը և շտրիխ-կոդը [1]:

Սոսնձվող պիտակները պատրաստվում են թղթի տարբեր տեսակներից կամ հատուկ թաղանթներից և լինում են 2 տեսակ՝ իրի վրա փակցվում է սոսնձով և կոչվում է «չոր» պիտակ, և ինքնասոսնձվող, որոնք ունեն իրենց սոսնձային շերտ: Պիտակների այս երկու տեսակներում էլ օգտագործում են պոլիգրաֆիական տպագրության տարբեր եղանակներ՝ օֆսեթային, ֆլեքսագրաֆիկական, բարձր, թվային, ջերմատպման և այլ: Ժամանակակից տեխնալոգիաները թույլ են տալիս դրվագել պիտակները դաջումով, գալոգրամներով, թերմոդաջումով:

Պիտակների ստացման համար կիրառվում են նաև մշակման հետևյալ տարբերակները [2].

Բլինտային մամլում. հարթ անգույն պատկերների կամ զարդարանքների դաջումն է, որը կատարվում է տաք մամլիչներով: Այսպիսի մամլման ժամանակ տաք շտամպը նյութի վրա թողնում է որոշակի փոսիկներ, ինչի արդյունքում երևում է տրված պատկերը:

Փայլաթիթեղով դաջումը. ստացվում է փայլաթիթեղի անցկացումով հիմքի վրա. այս դեպքում փայլաթիթեղի շերտը տեղադրվում է կաշվի և տաք կաղապարի միջև, և այսպիսի տաք մամլումից հետո ստացվում է բավականին գեղեցիկ արտաքին տեսքով կաշի: Շատ հաճախ ներկարված կաշվե պիտակների կարելի է հանդիպել ջինսերի հետևի գրպանին. այդտեղ, բացի տվյալ ապրանքի լոգոյից, կարող են գրվել չափսը, համարը և այլն:

Թերմոնստեցվող պիտակներ. այս պիտակները պատրաստվում են պոլիմերային շերտից: Դրանք խիստ նստում են իրի վրա և ընդգծում նրա բոլոր ձևերը՝ քողարկելով թերությունները, պաշտպանում են այն վնասումից: Նման պիտակների տպումը ներսի կողմից ապահովում է տվյալ գունային շերտի և փայլի պահպանությունը: Նման պիտակների դիզայնը շատ բարդ տեխնոլոգիական խնդիր է, և պետք է հաշվի առնել, թե ինչպես կդիտվի պիտակի նկարը, երբ փաթեթավորումը բերվի ավարտուն տեսքի:

Վերջին տարիներին ավելացել է նաև լրացուցիցիչ **պաշտպանիչ պիտակների** պահանջարկը, որոնք հնարավորություն են տալիս պաշտպանել բրենդը գողանալուց կամ ոչ օրինական օգտագործումից: Նմանատիպ գործողություններից պաշտպանվելու համար պիտակների մեջ օգտագործում են հատուկ միջոցներ՝ թուղթ և պոլիմերային թաղանթներ, որոնք պաշտպանված են կեղծումից և պարունակում են հատուկ մանրաթելային շերտեր, ջրային նշաններ և այլն: Կարելի է օգտագործել հատուկ պիտակային ներկեր, որոնք հնարավոր չէ մաքրել՝ ֆլուորեսցենտային, լյումեսցենային, մագնիսական, ֆոտոքրոմային, որոնք քայքայվում են ջրի ազդեցությունից, ինչպես նաև ներկեր, որոնք փոփոխվում են լույսի ազդեցությունից:

Ըստ **կառուցվածքի** պիտակները դասակարգվում են՝ կախված իրին ամրացման մեթոդից [2,3]:

Կախովի պիտակներն ունեն իրենց կառուցվածքում հատուկ անցք, որով անցկացվում են՝ թելը, շղթան և այլ կախովի նյութեր:

Սոսնձվող պիտակներն ամրացվում են իրի վրա սոսնձով, որը քսվում է պիտակի հակառակ երեսին: Ժամանակակից սոսինձների և բազմաշերտ նյութերի օգտագործումը հնարավորություն է տալիս անհրաժեշտ ինֆորմացիան զետեղել հենց սոսնձող պիտակի մակերեսին, և սպառողը կարող է այդ պիտակը հեռացնել իրի վրայից և կարդալ պիտակի հակառակ կողմում տրված տեղեկությունը:

Կարվող պիտակներն ամրացվում են մեկ կամ երկու կողմից կամ ամբողջ պարագծով: Հիմնականում կարվող պիտակները պատրաստվում են գործվածքներից, որոնց կառուցվածքը կախված է նրանից, թե ինչպես պետք է մշակվեն տվյալ պիտակի եզրերը: Նմանատիպ պիտակները կարվում են հիմնականում կողքի կարերում կամ էլ կախիչներում:

Կախիչ. այսպիսի ունիվերսալ կարովի ներկարված պիտակները արդուկման հատուկ տեխնիկայով պատրաստվում են այնպես, որ ստեղծվում է կախիչի ձև: Այսպիսի պիտակներ օգտագործվում են կենցաղային պայմաններում կիրառվող հագուստի մեջ, օրինակ՝ լողազգեստների կամ էլ խոհանոցային սրբիչներում:

Պիտակ-գրքույկը կամ պիտակ-բուկլետը կարող է կազմված լինել մի քանի էջերից կամ էլ լինի ծալված վիճակում, որը բացելիս կարող է հասնել մինչև A4 ֆորմատի թղթի չափին: Այսպիսի պիտակները հնարավորություն են տալիս ընդլայնել այն տեղեկությունը, որն անհրաժեշտ է տվյալ ապրանքը գովազդելու համար: Այն կարող է գրվել մի քանի լեզուներով:

Բազմաշերտ պիտակ. հեշտ հեռացող պիտակ է, որը հիմնականում կառուցված է 2-3 շերտերից: Այսպիսի պիտակներն օգտագործվում են բազմակի անգամ, այսինքն՝ սոսնձված մասը կարելի է բացել, կարդալ և նորից փակել: Այսպիսի բազմաշերտ պիտակները շատ են օգտագործում նաև կենցաղային իրերի մեջ, օրինակ՝ պարֆումերիայում, հիգիենիկ իրերի, նաև դեղորայքային իրերի վրա:

Պիտակ-ծրար. նմանատիպ պիտակները պատրաստվում են թղթից, ստվարաթղթից կամ պոլիվինիլքլորիդից և ունեն ծրարի տեսք, կարող են ունենալ տարբեր գույներ. վրան կարող է պատկերված լինել ապրանքային նշանը կամ լրիվ մաքուր լինել: Այսպիսի փոքրիկ պիտակները, որոնք կարող են կցված լինել ուրիշ պիտակների հետ, նախատեսված են լրացուցիչ կոճակների, կաշվե մասերի, գործվածքային թելերի նմուշների համար:

Կախիչ-պիտակ. սրանք կոշտ ստվարաթղթից կամ պոլիվինիքլորիդից պիտակներ են, և նրանց կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ այսպիսի պիտակով իրը կարելի է կախել հենց ցուցափեղկերի կամ վաճառվող ստենդների վրա: Այս դեպքում այս պիտակ-կախիչի ձևի և կառուցվածքի մեջ մտցվում հատուկ կառուցվածքով կախիչ կամ կեռիկ կամ հատուկ անցք, որի միջոցով կախվում է տվյալ իրը: Այս պիտակներն օգտագործվում են գուլպանասկեղենի, վերնահագուստի, գոտիների կամ հագուստի դեկորատիվ լրացումների համար:

Պիտակներ կայծակ-ճարմանդների վրա. գործվածքային պիտակներ են, որոնք ամրացվում են կայծակ-ճարմանդների վրա: Սրանք ժակքարդային հյուսվածքով մի ծայրում անցքով պիտակներ են, որոնք ամրացվում են կայծակ-ճարմանդի վրա: Կիրառվում են սպորտային, մանկական, ամենօրյա հագուստում և գեղագիտական տեսք են հաղորդում իրերին:

Պիտակ-բանդերոլ. սրանք թղթե ժապավեններ են, որոնցով փաթաթվում են երկարավուն գլանաձև փաթեթավորած իրերը, օրինակ՝ սրբիչները, թելերի կծիկները:

Պիտակ-ներդիր. սրանք դրվում են փաթեթների մեջ: Այսպիսի պիտակները շատ են կիրառվել XX դարի վերջին և XXI սկզբին հիմնականում թափանցիկ պոլիէթիլենային փաթեթներում: Դրանք պատրաստվում են թղթից կամ ստվարաթղթից և կարող են ունենալ տարբեր բարդ ձևածքներ՝ կախված փաթեթավորման կառուցվածքից և տեսակից:

Առանձին խումբ են կազմում ***պիտակ-հուշանվերները***: Սրանք ներկայացնում են պիտակ-կախազարդեր կամ պիտակ-խաղալիքներ: Այսպիսի պիտակների վրա փակցված են արատադրողի լոգոտիպը, առևտրային նշանը և այլ գովազդային տեղեկություններ արտադրողի կողմից: Նմանատիպ պիտակները ավելի երկար են մնում գնորդի մոտ, ինչը նպաստում է տվյալ իրի և արտադրության պահանջարկի մեծացմանը: Նմանատիպ պիտակներից են մագնիտ-պիտակները, նշան-պիտակները և այլ ինքնասոսնձվող պիտակներ:

Ցանկացած դիզայների համար մեծ նշանակություն ունի ապրանքանիշերի և պիտակների դասակարգումն ըստ **գեղարվեստա-կերպարային** նշանակության: Ամենաառաջին խումբը կազմում են հասարակ՝ «պարզեցված» պիտակները, որոնց պատկանում են ապրանքանիշ-լոգոտիպերը կամ ապրանքանիշ-այցետոմսերը և ապրանքանիշ-չափիչները (տեղեկատու) [4, 5]:

Ապրանքանիշ-լոգոտիպ կամ ապրանքանիշ-այցետոմս. ամենաշատ տարածված ապրանքապիտակային տեսակներից է, որտեղ նշված է արտադրողի լոգոտիպը, ապրանքային նշանը կամ նրա հավաքածուի անվանումը, շատ դեպքերում՝ ֆիրմայի կարգախոսը:

Պիտակ–չափիչ (տեղեկատու). այսպիսի պիտակների կարևորությունը կախված է պիտակի վրա գրված տեղեկությունից (չափսերը, խնամքի տեսակները, շտրիխ-կոդը և այլն):

Պիտակ–պլակատ. սա հակիրճ գրաֆիկական ձև է, որն արտահայտում է ընդհանուր միտքը, որոշ դեպքերում անտեսելով ապրանքը: Նմանատիպ պիտակները, չնայած իրենց փոքր չափսերին, բովանդակում են պլակատի բոլոր տեսանելի արտաքին հատկանիշները՝ կոմպոզիցիաները, նկարները, պատկերային որոշ հատվածները:

Պիտակ–հայտարարություն, պիտակ–ֆլայեր, պիտակ–թերթիկ. Սրանք ունեն ոչ բարդ տառատեսակային կոմպոզիցիա: Նմանատիպ պիտակներն օգտագործվում են որպես գովազդային-տեղեկատվական համակարգ՝ սպառողին տեղեկացնելով արտադրության կամ նոր ապրանքների, ակցիաների մասին:

Պիտակ–դիպլոմ, պիտակ–սերտիֆիկատ, պիտակ–շքանշան: Պիտակ-դիպլոմը նման է դիպլոմների արտաքին տեսքին, պիտակ-շքանշանը կարող է ունենալ հենց շքանշանի ձևը կամ տեսքը, որը բովանդակում է տվյալ արտադրողի նշանը կամ տեղեկություն առավելությունների մասին:

Պիտակ–բացիկ. ամենաշատ տարածված ձևն է ոչ գովազդային բնույթի, որտեղ օգտագործվում են տարբեր տառատեսակներ, կարող են լինել նկարներ, նատյուրմորտներ:

Պիտակ-մինիբուկլետ. պարունակում է ապրանքի մասին ամբողջ տեղեկությունը, նույնիսկ ընդգրկված են նկարներ: Այսպիսի պիտակները կարող են ծալված լինել երկու կամ երեք զուգահեռ ծալվածքներով, ինչը իրին տալիս է ավելի կոմպակտ տեսք, և հնարավորություն՝ տեղեկատվությունը բաժանելու բաժինների և կարդալ դրանք առանձին-առանձին:

Եզրակացություններ: Կատարվել է տեքստիլ և թեթև արդյունաբերության իրերի ապրանքանիշերի և պիտակների նմուշների վերլուծություն, որի հիման վրա առաջարկվել է դրանց դասակարգման նոր համակարգ՝ ըստ տեխնոլոգիական, կառուցվածքային, գեղարվեստա-կերպարային հատկանիշների:

Դասակարգումն ըստ ***տեխնոլոգիական*** հատկանիշների կատարվել է մի քանի պարամետրերով՝ տեղեկության գրման մեթոդով, նյութի պատրաստումով և տպման տեսակով:

Դասակարգումն ըստ ***կառուցվածքային*** հատկանիշների հնարավորություն տվեց առանձնացնել՝ թերթիկները՝ թղթե սոսնձային շերտերով, ծալովի կառուցվածքներ, կախովի կառուցվածքներ, պիտակ-հուշանվերներ:

Դասակարգումն ըստ ***գեղարվեստա-կերպարային*** հատկանիշների հնարավորություն տվեց առանձնացնել պիտակների «պարզ» խումբը՝ պիտակ–չափիչ, պիտակ-այցետոմս և «բարդ» խումբը՝ պիտակ-պլակատ, ապրանքանիշ- հայտարարություն, ապրանքանիշ-դիպլոմ, ապրանքանիշ–շքանշան, ապրանքանիշ-բացիկ և ապրանքանիշ-մինիբուկլետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Кирван М. Дж.** Упаковка на основе бумаги и картона. - СПб.: Профессия, Ритм: БСЭ.- 2-е изд., **2008.** - 552 с.
2. **Соболева Т.А., Суперанская А.В.** Товарные знаки. — М.: Наука, 1986. -176 с.
3. **Бесчастнов Н.П., Журавлева Т.А.** Художественное проектирование текстильного печатного рисунка: Учебное пособие. — М.: МГТУ, 2003. -294 с.
4. **Михайлов С.М., Кулеева Л.М.** Основы дизайна: Учебник для вузов/ Под ред. С.М. Михайлова. - 2-е изд., перераб. и доп. - М.: Союз, дизайнеров, 2002. - 240 с.
5. **Стор И.Н.** Декоративная живопись: Учебное пособие для вузов. — М.: МГТУ им. А.Н. Косыгина, 2004. - 328 с.

А.Дж. АСАТРЯН, А.С. ПНДЖОЯН

РАЗРАБОТКА СИСТЕМЫ КЛАССИФИКАЦИИ ЭТИКЕТОК И ЯРЛЫКОВ ИЗДЕЛИЙ ТЕКСТИЛЬНОЙ И ЛЕГКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ

Проведен анализ образцов этикеток и ярлыков изделий текстильной и легкой промышленности, на основе которого предложена новая система их классификации по технологическим, конструктивным и образно-художественным признакам.

Ключевые слова: ярлык, этикетка, реклама, навесные ярлыки, наклеиваемые ярлыки.

A.JH. ASATRYAN, A.S. PNJOYAN

DEVELOPING THE SYSTEM OF CLASSIFICATION OF LABELS AND TRADEMARKS FOR TEXTILE AND LIGHT INDUSTRY

The labels and trademarks for textile and light indusrty prodcuts are analized, and a new system for their classification is proposed according to technological, structural and figurative-artistic features.

Keywords: label, trademark, advertisment, the system of classification of labels.